

գնդերը առանց Մարաց զօրքերը յետ ուղարկելու: Արտասազը անօգնական մնաց: յաղթունց պարթեաններից եւ գերի ընկաւ ինչոքս: Մարտատանն ու Հայաստանը կըրկին ընկան պարթեանց գերիշխանութեան ներքոյ: Հռովմէական պահակ զօրքը Հայաստանում չարդուեցաւ եւ Արտաշէս Բ-ը բարձրացաւ իւր հայրենի գահը 32 թ. Բրիտանոսից առաջ: Մի տարի յետոյ, պարթեանց տէրութեան ներքին խռովութիւնների միջոցին, Մարաց Արտասազը թագաւորը փախաւ եւ ապաւինեց հռովմացեցիներին: Իսկ Հայոց Արտաշէս թագաւորը՝ յոյս չունենալով պարթեանց պաշտպանութեան վերայ, թարեկամութեան դաշն հաստատեց հռովմացեցիների հետ:

Քրատեսի անդժութիւնների պատճառով ներքին խռովութիւններ բարձրացան Պարսկաստանում 33 թականից մինչև 27 թ. Քրատեսի Հակասակ թագաւորեց Տիրիդատէս Բ-ը, որ նախ պարտութիւն կրելով ապաւինեց հռովմացեցիներին: այնտեղից կրկին յարձակուեց պարթեանց տէրութեան վերայ եւ Քրատեսին հալածելով թագաւորեց նրա փոխանակ: Քրատեսը ապաւինեց Սելեւսից: Եւ նրանցից օգնութիւն դանկով 26 թ. յուլիսին կրկին նստաւ իւր գահը:

(Շարունակելի)

Ն. Բարսեղյան.



ՄԻ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՆՈՒԹԵԱՆԻՔ

ԱՆՔԱՆՑ

ԸՍՏ

ՆՈՐԱԳՈՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԵԱՆՑ.



Հայաստան աշխարհի հնազոյն պատմութեան մասին հաւաստի տեղեկութիւն են հաղորդում մեզ նախ ասորեստանցիք եւ ապա բուն երկրի սեպագիրները, որոնց վերձանութեան համար տակաւին միայն փորձեր են լինում: Ասորեստանցիք այս երկիրն անուանում են Ուրարտու, որին համապատասխանում է Դ. Թագ. ԺԹ. 37. յիշուած «յերկիրն Արարատայ» եւ Ծայի 37, 38. Երեւ. 51, 27. «Արարատեան թագաւորութիւն» խօսքը: Իսկ բնիկ ժողովուրդը իւր զխաւոր յալդիս աստուծոյ անունով յալդիսի է կոչուում (յալդիք. Եօյները յիշում են Պոնտոսում

և Հայաստանում ապրող մի ժողովուրդ խալտիք անունով, որ շփոթելով խառնում են քաղղէացի անուն հետ): Հայաստանի այս հնազոյն բնակիչները յետագայ բնակիչներից բոլորովին զանազանուում են իւրեանց լեզուով: Այդ լեզուն նման է սուրբեան լեզուին եւ Սուսիանայի բնիկ լեզուի մի բարբառն է, որ ըստ իւր կազմութեան ցեղակից է երեւում կամ նմանութիւն ունի ուրալ—ալտայեան լեզուներին: Ուրարտուցիք կամ յալդիքը սկզբում անշուշտ ապրում էին վանայ ծովից դէպի արեւելք—Արարատ (Այրարատ) կենտրոնական նահանգը իւր անունով պարզ ցոյց է տալիս նոցա բնակութեան հետքը—յիտոյ յառաջացան դէպի հարաւ եւ արեւմուտք: Մի շատ ընդունակ եռանդոտ եւ զորձունեայ աշխարհակալ ցեղ այտեղ մի մեծ պետութիւն է հիմնել եւ ոչ անյաջող կերպով կռիւներ է մղել իւր ախոյեան ասորեստանցւոց հետ: Այս պետութեան մայրաքաղաքն էր այգեշատ վան—Տոպը իւր անառիկ միջնաբերդով: Այդտեղի աղբային յալդիս աստուծոյ տաճարը աստուածպետական կազմակերպութիւն ունեցող տէրութեան կենտրոնն էր: Մէնուաս թագաւորը իւր անունով կոչուած զարմանահարաջ ջրանցքով (այժմ կոչուում է Շամիրամի առու) իւր քաղաքին ջուր էր մատակարարում: Պետութիւնն իւր փառաւորութեան հեռակէտին հասաւ սորա որդի Արգիստիս Ա-ի օրով, որ ստիպուեցաւ վեց անգամ պատերազմի դաշտը դուրս գալ Սաղմանասար Գ-ի (783—773) դէմ որի թոյլ յաջորդների ժամանակ Ուրարտուն իւր դաշնակից եւ աւատական իշխանութեանց հետ իրօք գերիշխան էր առաջաւոր Ասիայում: Սակայն Տիգրատպիլեզարի զահ բարձրանալուց ի վեր ասորեստանցիք զօրանալով խախտեցին այս առժամանակեայ հզօր պետութեան դիրքը: Մինչև անգամ 735 թ. ին Տոպ մայրաքաղաքն աւերուեցաւ: Բայց եւ այնպէս թուլացած Ուրարտուի պետութիւնը շարունակեց իւր գոյութիւնը ասորեստանցւոց զօրերիմ թշնամի ֆալով: Այս պատճառաւ 681-ին Սենեքերիմի հայրապան որդիքն այնտեղ փախան: Ապա առ սակաւ սակաւ այս երկու մեծ պետութեանց յարաբերութիւններն աւելի բարե-

կամական դարձան: Մինչև 640 թուականը Ռւրարտուի թագաւորի գետականները Նինուէ են գնում Վերջին անգամ Երեմիա մարգարէն յիշատակում է այս պետութիւնը. ապա այնուհետեւ անյայտանում է պատմութեան միջից. [Հմմ. Կ. Փ. Լէհմանն, Դախահայ պետութիւն Վանայ՝ Գերմանական հանդէս (Deutsche Rundschau) 1894—5 I, էջ 353—369. Լէհմաննի և Բէլլի բաղմաթիւ մասնակի ուսումնասիրութիւնները Ազգագրական հանդիսում (Zeitsch. f. Ethnologie) 1892 էջ. 122 և ինչ, 1893 էջ 61 և ինչ, էջ 217 և ինչ, էջ 389 և ինչ, 1896 էջ 578 և ինչ. Ասորբանական հանդիսում (Zeitsch. f. Assyriologie) VII, էջ 255 և ինչ, IX էջ 82 և ինչ, 39 և այլն և այլն]:

Կիմմերացւոց յարձակմունքների ժամանակ հնդկագերմանական ցեղերն սկսան ուժգնակի յառաջ խաղալ. վեցերորդ դարում Հայաստանըն էլ հեղեղեց հնդկագերմանական ժողովուրդը: Պարսիկներն ինչպէս և յոյները նոցա անուանում են արմէներ (Armina), մինչդեռ ժողովուրդն ինքն այդ անունը չգիտէ: Արմէներն իրենց անուանում են հայք (հայ անուն յոգնակին) նոյնպէս և երկիրը Հայք (կամ Հայաստան) և իրենց ծագումը համարում են առասպելական Հայկ նախահօրից: Կարելի է որ այստեղ նոքա զաղթել են նիլիկիայից. որովհետեւ Պ. Ենդէնի սրամիտ հետազօտութեանց նայելով շատ հաւանական է, որ այսպէս կոչուած հետտիաների սրբազրերի լեզուն հին հայերէնն է (Հմմ. Պ. Ենդէն, Հիմունքներ հատեան կամ կրիկեան արձանագրութեանց վերծանութեան, ZDMG X(L)VIII էջ 235 և հ. էջ 429 և հ. նոյն Ենդէնը Wiener Z. f. Kunde des Morgenlandes 1896 էջ 1 և հ.): Սորան համաձայն է այն որ Հերոդոտը (I 72, 94. III 93, V 52) հայոց բնակավայրն արեւմուտքում՝ Փոքր Հայքում և Եփրատի ու Տիգրիսի աւազանում է գնում մինչդեռ արեւելքում Արաքսի հովտում ալաբոգներն էին կենում: որոնք իրաւամբ նոյն ուրարտացիքն են համարւում: Յամնայի դէպս նորեկ հնդկագերմանական իշխող ցեղն այնքան իւրացնելու ոյժ և կարողութիւն ունէր, որ նա հետեւեալ դարերի ընթացքում հին ծագմամբ օտար, բնիկ ժողովուրդն ամ-

բողջապէս իւր հետ ձուլեց: Առաջ Հագարդն և ուրիշները ընդունում էին որ հնդկագերմանական ծագում ունեցող հայերն մերձաւոր ազգականութիւն ունին իրանացւոց հետ, բայց այժմ բոլորովին սխալ համարելով թողել են այդ. ինչ հարստութիւն որ հայերն իրանական լեզուից ունին, այդ պատմական ժամանակներում են փոխ առել: Այն ինչ որ ազգային պատմագիրները՝ Մար Աբաս Կատինան և Մովսէս Խորենացին, հնագոյն պատմութեան մասին աւանդում են, ըստ մեծի մասին մինչև իսկ պատմական արժէք չունի: այլ հիմնուած է գիտական կոմբինացիայի վրայ: Այսպէս՝ որ Թորգոմը Հայկի հայրն է, առնուած է եօթանասնից թարգմանութիւնից, որովհետեւ Ս. Գրքի յիշած ազգերի անուանց ցուցակի եկեղեցական մեկնութեան համաձայն հայերն Թորգոմից են ծագում: Հայկի յաջորդներից են այնպիսի կասկածելի անձինք, ինչպէս Արմեական և Կադմոս: Արամ որի անունն հետ այնքան զրոյցներ են կապուած, Ասորիքից է առնուած, ինչպէս անունն ինքը ցոյց է տալիս. այսպէս էլ մի և նոյն պարզամտութեամբ հայերը իրենց պատմութեան համար քրիստոնէական սկզբնաւորութեան ասորական աւանդութիւնն իւրացուցել են: Բայց ամենից առաջ Հայաստանի փառքն է կազմում այն, որ Նոյեան տապանը Արարատեան լեռների վերայ է նստել (Տրնունդք 8) 4): Արարատ անունը այժմ տալիս են կենտրոնական Արարատ նահանգի ձիւնապատ ամենաբարձր լեռան, որի հին, այժմ էլ գործածական, հայերէն անունն է Մասիս, որ թուրքերը կոչում են Աղլղաղ: Երջակայքի բաղմաթիւ անունները ձեւափոխուելով և բռնադրօսիկ լեզուագիտութեամբ յարմարեցուցել են այս նպատակին: Դախահայ քաղաքն այս պատճառաւ կոչուում է Դախ իջեանն այսինքն առաջին իջեան, որովհետեւ Նոյի առաջին իջեանն է եղել: Ակոռի գիւղը պէտք է իսկապէս լինի Արկ ուռի այսինքն «Դա ձգեց» տնկեց, խաղողի որթը: Առնոյտն գաւառն է առ Նոյ ոտն այսինքն «առ ոտն Նոյի» որովհետեւ Նոյն այստեղ դուրս եկաւ տապանից: Մարանդ քաղաքի անունը ծագում է Մայր անդ, այսինքն Մայրը այնտեղ ուր Նոյի կինն է թաղուել:

Այս բոլոր առապելները անհմուտ կերպով և ուշ են յօրինուած: Հին պատմութիւնը չգիտէ թէ Մասիսի վրայ է իջել Նոյեան տապանը: Ղաղար փարպեցին հինգերորդ դարում իւր ոգեւորութեամբ Այրարատի շարադրած նկարագրութեան մէջ (գլ. 7 և 8) ոչինչ չէ ասում այն մասին՝ թէ Այրարատի մէջ է այն լեռը, որի վրայ տապանն է նստել: Այսպէս էլ Մովսէս Խորենացին այս մասին չէ յիշատակում ոչ իւր պատմութեան և ոչ իւր աշխարհագրութեան մէջ: Իսկ Փաւստոս Բիւզանդացու (III 10) պատմելով ս. Թակոբ Մծբնացին Նոյեան տապանը փնտռում էր Այրարատեան իշխանութեան մէջ Կորդուաց նահանգի (Մ) արարաբ լեռան վրայ: Ըստ այսմ Դ. դարում հայերը, ինչպէս ասորիք և բարեկացիք, Նոյեան տապանն և իւր վրայ ընդունող լեռը դեռ փնտռում էին ոչ թէ Մասիսի սահմաններում, այլ Կորդուաց աշխարհում: Առաջին անգամ Մասիսը Նոյեան տապանն իւր վրայ ընդունող լեռը համարում է ս. Հիերոնիմոսը (Comm. in Isaiam XI 38 vol. 11 p. 467 ed. D. Vallars):

Այսպիսով ուրեմն օտար գիտնականների մի կոմբինացիա է այս, որ շատ ուշ, յամենայն դէպս թ. կամ Ժ. դարից ոչ առաջ, հայոց մէջ մուտք է գործել:

Հայաստանի պատմութեան համար մենք պէտք է դիմենք յոյն և հռոմէական աղբիւրների, վասն զի ազգային պատմութիւնը բացի Մովսէս Խորենացու պահպանած ազգային հին երգերի հատուածներից ըստ մեծի մասին արժէք չունի և ուշ ժամանակ յերկրւում է:

Հայերն իրենց պատմական բնակավայրում հաստատուելուց յետոյ մնացին մարաց, ապա պարսից գերիշխանութեան տակ: Դարեհ Ա-ի ժամանակ 521 թուականից ի վեր տեղի ունեցած սատրապների բնդհանուր ապրտամբութեան մասնակից էին և հայերը, բայց հինգ ճակատամարտներում ընկճուելուց յետոյ Աքամէնեանց ժամանակ հանդարտ մնացին: Բսենոֆոնի օրով* Հայաստանը բաժանուած էր արևելեան և արևմտեան

սատրապութեան: Եունաց տիրապետութիւնը Հայաստանում լոկ անուենով էր, և այս էլ դադարեցաւ, երբ Անտիոքոս Մեծի երկու զօրավարները՝ Արտաքսիաս (Արտաշիաս կուսակալ) և Զարիադրիս նորա պարտութիւնից յետոյ Հռովմայեցւոց օգնութեամբ իրենց անկախ թագաւորներ հրատարակեցին, առաջինը բուն Հայաստանում, իսկ վերջինը ծովաց աշխարհում (Ստրաբոն, XI 531 0.): Դրացի իրերացւոց, մարաց և ասորոց սահմանակից զաւառները շուտով նուաճուեցան և կամաց կամաց հայացան: Բոլոր ժամանակներում Հայաստանի կուլտուրան սերտ կապ ունէր իրանի հետ: Իւր աստուածներից շատերը նա այնտեղից է փոխ առել: Պարսից սովորութիւնն իշխում էր արքունիքում և բարձր դասակարգի մէջ. սպառազինութիւնը պարսկական էր: Պարթևաց ժամանակ աւելի սերտ հաղորդակցութիւն կար: Նշանաւոր նախարարական տոհմերը պարճենում են իրենց պարթևական ծագմամբ: Զաղաքական կազմակերպութեամբ պետութիւնը, ինչպէս և պարթևականը բոլորովին մի աւատական տէրութիւն էր: Իշխող բարձր ազնուականութիւնը, նախարարները և ստորին ազնուականութիւնը՝ «ազատանիսն» և հզօր հոգեւորականութիւնը միայն նշանակութիւն ունին, իսկ ժողովուրդը բաժանուած է իշխող դասակարգերին հպատակեցւելի: Հայաստանն իւր զօրութեան զազաթնաւորն է հասնում Տիգրան Ա-ի* (մատաւորապէս 90—55) ժամանակ, որ Արտաքսիասի սերունդից էր: Նա Զարիադրիսի վերջին յաջորդ Արտանեսին գահընկեց անելով և ծովքը միացնելով տէրութեան միութիւնը հաստատեց. դրացի փոքր իշխանները (Մարք, Ատրպատականը, Կորդուաց աշխարհը) դարձան նորա աւատառու իշխաններ: Եւ ըստ այսմ՝ պարթևներին անդադար թուլացնելուց յետոյ, նա արքայից արքայ պատուանունը կրեց: Ապա 86 թուականին տիրեց Սելևկեան իշխանութեան Ասորիքում մնացած մասին, և այսպէս Հայաստանը, որ Միհրդատի նոր ծաղիկ պոնտական տէրութեան հետ դաշնակից էր, մեծ պետութիւն դարձաւ: Հին հայոց ազգա-

* 401 թ. Ն. Բ. երբ նա 40000 յոյներով Կիւնաքսայի ծաղկատմարտից վերադառնալով արեւմտեան Հայաստանով անցնում էր, ծովով Եունաստան նասնելու համար:

Ժ. Թ.

* Խորենացու Տիգրան Բ. Արշակունի: Ժ. Թ.

յին երգերը Տիգրանին շատ փառաբարում էին որ օտար ազգերին հարկի տակ զրեց, ոսկի արծաթ, աղին քարեր, թանկագին զգեստներ էր բաշխում իւր հպատակներին և հետեակներին հեծեալներ, պարսատիկաւորներին նետաձիգներ դարձուց (Մ. յԹորենացի Ա. 24)։ Մ. յԹորենացին իւր թիւր գիտնականութեամբ այս երգերը կիւրտի ժամանակակից Զենոֆոնի վիպասանութեան մէջ գործող Տիգրանին է վերագրում։ մինչդեռ երգերը բնականաբար գովասանում էին Լուկուլլոսի ժամանակակիցին։ Դիտելու արժանի է և այն, որ Տիգրանը հեղինակիրական մի քաղաքականութեան է հետևում ի հարկէ իոնական արևելքան ձևով։ Եռնական 12 քաղաքների բնակիչների նա բռնի իւր նոր Տիգրանակերտ մայրաքաղաքը քշեց, երևում է որ կառավարութիւնն ուզում էր իւր արևելեան կուլտուրական աւանդութիւնները խզել ու կտրել։ Սակայն Լուկուլլոսի մեծ յաղթանակը (69) և Պոմպէյոսի ձեռնարկութիւնները այս բարձրագոյն ծրագրներին շուտ վերջ տուին։ 66 թուականի խաղաղութեամբ Հայաստանին մնաց իւր հին սահմանները։ Այս ժամանակից սկսած անզօր և հովանութակ ապրող տէրութիւնը տատանուում էր հռովմայեցւոց և պարթեաց գերիշխանութեան ներքոյ։ Այս մեծ պետութիւնները փոփոխակի թագաւորներ էին նշանակում Հայոց վրայ։ Բայց իշխանների և աղնուականութեան համակրութիւնն բոլորովին Պարթեաց կողմն էր։ Այս պատճառով շատ խոհական էր հռովմայեցւոց քաղաքականութեան այն քայլը որով Երեւոն կայսրը չնայելով նորբուլոսի յաղթութեանց, 66 Յ. Բ. Պարթեաց արքայի արքայի եղբայր Տրդատին, որ Հռովմ էր եկել հնազանդութիւն յայտնելու, հանդիսաւոր կերպով թագաւոր ճանաչեց։ Այդ ժամանակից Արշակունեաց մի երկրորդ ճիւղը իշխեց Հայաստանում մինչև տէրութեան անկումը և նոյն տէրութիւնը պարթեական պետութեան հետ պինդ կապով կապեց։ Տրայիանոս կայսեր ժամանակ (114—117) Հայաստանը մի հռովմական նահանգ դարձաւ բայց այդ ժամանակաւոր եղաւ և ոչ մի այլ հետեանք չունեցաւ։ Առաւել նշանաւոր էր Հայաստանի համար


պարթե Արշակունեաց անկումը և Սասանեան իշխանութեան հաստատուիլը։ Պարսկաստանում 226-ին Գահադուրի օրինական ժառանգների ազգականները հայ թագաւորներն էին, որ Պարսից արքայից արքաներին ռկելով թշնամի էին Արգէն 238-ին Հայոց յոսրով թագաւորը Պարսից նենգութեամբ սպանուեցաւ։ Սորան հետևող խառնաշփոթ շրջանում Սասանեանները յաջողեցան առ ժամանակ երկրին տիրել և հայերին ատելի մազդեզական կրօնը բռնի տարածել, մինչև որ 261-ին Օգենատ Պարսիրացու յաղթութեամբ երկիրը իւր ազատութիւնը նորից ստացաւ (Ա. Փօն Գուաշմիդ, Kleine schriften III, էջ 402 և հ.)։ Հռովմայեցւոց երկիրն ապաւինած արքայորդի Տրդատը (Տիրիդատէս) տէրութիւնը վերանորոգեց և կառավարեց։ հռովմայեցւոց հետ սերտ կապ հաստատելով և անդադար պարսից դէմ կռիւներ մղելով։ Թագաւորի և հայ ժողովրդի դարձն ի քրիստոնէութիւն նպաստեց Հռովմի և Հայաստանի շահերին այնու, որ այնուհետև սկսուեցաւ հռովմայեցւոց համակրող մի քաղաքականութիւն, որ վերջացաւ միայն Երեւանոսի դժբախտ արշաւանքով և Եռլիանոսի (363-ին) ամօթալի խաղաղութեամբ։ Պարսիկները տիրեցին Հայաստանին և Արշակ թագաւորն պարսից ձեռքը գերի ընկաւ։ Վալէնս (Վաղէս) կայսրը տեսաւ այս խոշոր սխալը և Արշակի որդի Պապին զահ բարձրացուց (367—374)։ Սակայն արքայական զօրութիւնն ընկճուեցաւ մեծազօր աղնուականութեան և հոգեւորականութեան առաջ։ Պետութեան վերջին լուրջանն էր աղնուականութեան գլխաւոր Մանուէլ Մամիկոնեանի խնամակալութեան ժամանակը (38—385), որ կղերականութեան համամիտ էր։ 387-ին Թէոդոս կայսրը չափազանց կարճամիտ քաղաքականութեամբ պետութիւնը պարսից հետ բաժանեց։ հռովմայեցիք ստացան մի աննշան հատուած արևմտեան մասից նարին (Թէոդոսոյիս) քաղաքով, մինչդեռ Հայաստանի 1/3 մասը պարսից անցաւ։ Մինչև 428 պարսից գերիշխանութեան ներքոյ կառավարեցին հայ թոյլ և անզօր թագաւորներ, ապա պարսիկները մարզ-

պաններ (կուսակալներ) նշանակեցին, որոնք յաճախ հայեր էին, և ընդհանրապէս պարսիկները երկիրն արտաքոյ կարգի զգուշաւորութեամբ էին կառավարում: Շատ ասպետութիւններ եղան ի նպաստ Բիւզանդացւոց, բայց անհետեանք մնացին, և երբ Մօրիկ (Մաւրիկիոս) կայսրը յոստով Պարուէղին 591-ին իւր գահի վերայ հաստատեց, սա համարեա ամբողջ Հայաստանը դաշնադրութեամբ հռովմայեցւոց տուեց: Հերակլ կայսեր յաղթութիւններէ շնորհիւ Հայաստանը նորից 629-ին հռովմայեցւոց հովանաւորութեան տակ ընկաւ, բայց շուտով յաջորդեց սորան արաբական իշխանութիւնը: Խալիֆաների իշխանութեան առաջին հարիւրամեայ շրջանը չնայելով աւերիչ արշաւանքներին ազգային և գրական շարժման մի դարազուխ էր, բայց Արասեանց ժամանակ արաբացի փոխարքաների, այն է ոստիկանների, ձեռքը շատ ծանրացել էր երկրի վերայ: Սակայն խոհական Աշոտ Ա. Բագրատունին, որ հայոց մի հին նախարարական տանից էր, բայց սխալմամբ հրէական ծագումով էր պարծնում, յաջողեց 855-ին իշխանաց իշխան դառնալ և 885 խալիֆայից արքայական թագ ընդունել: Նորահաստատ թագաւորութիւնն ամփոփում էր իւր մէջ ոչ միայն Հայաստանը, այլ և Աղուանքն ու Վրաստանը նորա գերիշխանութեան ներքոյ էին: 913 թուականից այս տէրութիւնն այլ ևս հարկատու չէր, բայց դորա փոխարէն երկիրը բաժանուեցաւ մանր մունր թագաւորութեանց, որոնցից ամենից նշանաւորն էր Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը: Սեղուկեանց յորձակումներից երկիրը կրելով Արծրունեաց վերջին թագաւոր Սենեքերիմը 1021-ին և Գագիկ Բագրատունին¹ իրենց տէրութիւնները զիջան Բիւզանդացւոց: Բայց սքեա էլ ոյժ չունէին սարսափելի յորձանքին զիմադրելու: Սեղուկեան հրոսակների անըդհատ ահաբեկ աւերմունքները Հայոց քաղաքական և կուլտուրական կեանքին մահու հարուած տուին իրենց հայրենիքում:

Բաղմաթիւ Հայեր այս ասպատակութեանց ժամանակ Տաւրոսեան լեռները և նիլիկիա քաղուեցան: 1080 թուականին Ռուբէնը, որ հաւանօրէն Բագրատունի¹ էր, մի փոքրիկ իշխանութիւն հիմնեց և մի նոր հարստութեան՝ Ռուբինեանց, հիմնադիրը դարձաւ: Նորա քաջ յաջորդները հետզհետէ ամբողջ նիլիկիան նուաճեցին. նոքա Բիւզանդացւոց հետ թշնամի էին, բայց աւելի մօտ էին խաչակիրների տէրութեանց, որպէս և հայոց նիլիկիոյ այս փոքրիկ պետութիւնը իւր ներքին կազմակերպութեան մի կէս Ֆրանսիական աւատական պետութիւն էր: Լեոն Բ. 1198-ին թագաւոր օծուեցաւ:

Ռուբինեանց յաջորդեցին 1342-ին նիկարոսի Լուսինեանք: Մոնղոլների և արեւմուտքի գործակցութեամբ աշխատեց այս պետութիւնը Եգիպտոսի Մամլուկների յորձանքի առջ առնել: Բայց Լեոն Զ. ստիպուեցաւ իւր վերջին ամբողջ նոցա յանձնելու: Նա մեռաւ 1391-ին Պարիզում: Այս ժամանակից սկսած հայերն երբէք նորից մի անկախ պետութիւն չհիմնեցին: *

Ս. Կ.



1. Մատթէոս Ունայեցի Ռուբէնի համար ասում է, թէ զօրացն Գագիկայ՝ Վարդամ, Սամուէլ Անեցի եւ Հեթում՝ ռաբեանառու Գագիկայ՝ իսկ Միքայէլ Ասորին եւ Կիրակոս Վասպուրականի Արծրունեաց սերունդ են համարում: Ժ. Թ.

* Այստեղ յառաւ է բերուած Realencyclopädie f. protest. Theologie und Kirche հանրագիտական բառարանի Armenien (Հայաստան) յօդուածից այն մասը միայն, որ Հայաստանի անցեալ պատմութեանն է վերաբերում՝ Թողնելով զթականութեան, եկեղեցւոյ, արդի վիճակին վերաբերեալ մասերը: Այդ բառարանի 18 ստուար հատորներից լոյս է տեսել նորեքս Ա-ը երրորդ տպագրութեամբ. հիմնադիր խմբագիրներն են Հերցոգ եւ Պլինտ իսկ այժմ՝ խմբագիր է Հաուկ: «Հայաստան» յօդուածը նպակին հրատարակութեանց մէջ հայագետ Պետրմաննի հնդիսակութիւնն էր. իսկ այժմ լոյս է տեսնում բոլորովին փոխուած կերպով պրոֆ. Գեղեցեի աշխատութեամբ, որ վերջին ժամանակս շատ նշանակ է ցոյց տալիս Հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար: Այս առաջին հատորի մէջ կրկին յօդուածներ են գրել Սրբազան Օրմանեան եւ Կարապետ Վարդապետ:

1. Հեղինակն անշուշտ Կարոց Գագիկ թագաւորին է նկատի ունի (տ. Վարդան Քարծորեցի) եւ ոչ Գագիկ Բ-ին, որ յայտնի է թէ յունաց խաղաղամեջ եւ հայ նախարարների մի մասի նենգութեան զոյ գնաց: Ժ. Թ.